



#### 54. ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ՏԻՐԱՑՈՒՆ

Աստված ձրգի բարին տա, կէղնին-չէղնին՝ տերտեր ու տիրացու մե կէղնին. ըզոց մեջ հակառ գընկնա՝ տիրացուն զըզրա աղջիկ գուզե, տերտեր չըր համաձայնի:

— Զիմ Արտմերտու խնձոր աղջիկ ի՞մալ իտամ էդ դոթեցուկին, էդի չը կոնա էրկու իշու գարի ջոկե, կնիկ ի՞մալ պտի պահե:

Տիրացուն կը լսե, քանի կէրթա, քեվելի հակառ կը կանի տևրտըրուն, հմա բան չը կոնա էնե, գուզե օյին մե խաղա:

— Կանի,— կըսե,— հմալ խաղ մե խաղամ ըզոր գլխուն, օ՞ զուր մուխ մուրի:

Օր մե ժամ-պատարագ պտի էղներ: Տիրացու, դու տիրացու, ուրանց տնեն կանե ուր մամու հին թումբան, կը բերե ժամ, էն վախտ օր տերտերի շուրջառ կը հադցու, թումբան քուշիկ մե կը թալե տերտորոջ փիջանուն:

Ժամ քանի կէրթա՝ կը լցվի: Տերտերն զպատարագ գուզե սկսի, գիկա կը կանի, յերես դպա խորան, պառեկ՝ դպա ժողովուրդ: Ժամվորներն, օր դթումբան կը տեսնան՝ փորխոց կէղնին:

Տերտեր, օր մըջ քթին աղոթք կը քաղեր, կը դառնա դպա ժամվորներ, կը զարմանա, կը բոռա:

— Ախմըխնե՛ր, քորի՞ն կը ծիծղաք մըջ աստծու տան, իդա ծիծղալու տե՞ղ է:

Ժամվորներուց մեկ կըսե.

— Տե՛րտեր, վուրա, թոֆան է էկի արևուդ. մըջ աստծու տան կնկա թումբան ի՞նչ կէնե:

Տերտեր կիշկե կը տեսնա՝ հանդե կնկա հին թումբան մե թ...  
լուկ վըր ուր փիջանուն, գուն կիտա, գուն կառնե, հօռսից քիչ մնա  
փաթլամիշ էղնի, գլանեն սեղմուկ կըսե.

— Կա-չկա՝ էղի տիրացուն է էրի, ես ըզրա մամու մեռել...

Կըսե, շուրջառ կը թալե մեկ դեն, կը թողե ժամ-պատարագ, կը  
թոնա դուս, օր գտիրացուն գտնա, օռչնած գավազանով աղեկ դաս  
մե տա: Էլ շընք դի՛նա՝ կոցա՛վ գտիրացուն գտնա, շուրի չըսօր  
խարար շընք առերի:

